

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պատմականութեալ բուլոր յիւղանեցի, միացեք

Ա. ԱԹԱՆԱԶՅԱՆ

# ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՏՈՆԸ

ՅԵՎ

ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՅԵՎԵՔ պատկերներով)

ՀՐԱԿԱՆԳ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ



634.9

Ա - 26

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ

ՅԵՎԵՔ 1924

ՏՊԱԳ. ՏՐԵԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԱՊԱՐՀԱԿԱՆ ԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՀԱՅՈՑ ՀԱՄՄԵՇԽԱԾՄԱՆ ՏԱՐԱԾՄ

Կ 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՈՎ

ԵՎՀՈՎԱՆԻ ԱՆԴՐԱԾՄ

(Հայոց պատմական գաղափար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԱՔԱՐԴ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա-26

Ա/

ՊԵՐԼԻՆԱՐՆԵՐ ԲՈՒՐՈՒ ՀԱՐԿԵՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՐ

Ա. ԱԹԱՎԻՍՅԱՆ

# ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՏՈՆԸ

ՅԵՎ

ՆՐԱ ԿՈԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՅԵՎԻ ԿՐ ՊԱՏԿԻՆ ԵՎ ՊԱՎ)

ԳՐԱԿԱՆ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄՆԵՐԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ

ԵԵՐԵՎԱՆ—1924

1. ՄԱՍԻՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏՎԱԾ  
ՈԳՈՒԽՆԵՐԸ

Անգրկովկասի բոլոր հանրապետություններից ծառերով ամենից աղքատը Հայաստանն է. մեզնում կան ամբողջ դավանակը և ընդարձակ շրջաններ, վորոնք բոլորովին մերկ յեն ծառային բուսականությունից: Իսկ դա մեծապես ազդում է Հայաստանի բերքի անհաստատության և կիմայի չորության վրա մանավանդ մերձեռնային և լեռնային շրջաններում:

Ծառերի բացակայությունը տալիս է նաև տնտեսական մի շարք ուրիշ մնաններ, վորոնք կայանում են հետեւյաներում:

ա. Ծառերը ձյուն պահելու և նրա հողի մեջ ծծվելու ամենալավ միջոցներն են: Բոլորս նկատոծ կլինենք, վոր բաց և անծառ տեղերում ձյունը, գարնան արենի ազդեցության տակ, միքանի որում հալվում են և, կազմելով արագահոս գետակներ, գնում են ապարդյուն, քանդելով իր ճանապարհին հողը, առաջացնում են ձորակներ և ձորեր, վսրով մերկացնում են հողի պարարտ վերնաշերտը:



Այն ինչ յեթե մոտերքսւմ ծառեր կան, ձյունը, մալով դրանց արանքներում, ուշ ե հալվում և հողը ծծում, հազենում ե թե ծյան և թե անձրեվի ջրերով, վորոնք և ավելացնում են ջրի քանակը աղբյուրներում, գետերում և գետակներում:

բ. Ծառերի ստվերի տակ առուների, գետերի, գետակների աղբյուրների ջրերը ամառվա տապից շատ քիչ են գոլորշիանում և դրա հետևանքով առուները չեն չորանում, և նրանց ջրերը փոխանակ իրուր կորչելու, գործադրվում են արտերի, բանջարանոցների, այգիների վուոգման վրա:

գ. Այն տեղերում, ուր շատ ծառեր կան, գյուղացին, փոխանակ իր անասունների աղպը (փեյինը) աթար շինելու և վառելիքի տեղ գործադրելու, այդ աղպը հնարավորություն ունի դաշտ տանելու իր արտերը պարարտացնելու, վորից նրա բերքը զգալիորեն ավելանում ե:

դ. Ունենալով շատ ծառեր, տնկելով արհեստական անտառներ գյուղացին իր տանը, իր ձեռքի տակ ունենում ե թե շինության դերաններ, տախտակներ և այլն և թե այլ շինափառեր սայլերի, կամերի, լուծի, կահ-կարասիքի համար: Անծառ և անփայտ տեղերում գյուղացիները այդ բոլոր նյութեղենը առնում են դր-

սից, հեռու տեղերից և դրա համար իրանց սուղմիջոցներից մեծ փող են տալիս:

ե. Անծառ տեղերում, գյուղամիջում, տըների առջեւ և նրա յետևներում նաև հատուկ ծառատեղերում պտղատու ծառեր տնկելով, գըրանց պատվաստելով ու խնամելով, գյուղացին կունենա համեղ և մննդառատ միրք, վորը ներկայումս նա դարձյալ առնում ե դրսից և դրանով իր յեկամուտը քչացնում ե:

զ. Շնորհիվ արհեստապես բուսացրած ծառերի, լինին նրանք պտղատու թե անպտուղ, գեղեցկանում ե գյուղի արտաքին տեսքը, նրա շրջակայքը և դրանով գյուղը դառնում ե գըրավիչ շոգ քաղաքներից ամառնոց յեկողների համար, վորոնք քիչ գումար չեն թողնում գյուղում: Վերև յիշած և շատ ուրիշ պատճառներ ստիպել են անծառ գյուղերին և ընդարձակ շրջաններին գիմել արհեստական ծառացման կամ յերկրի անտառացման, վորը վոչ մի դժվարություն չի ներկայացնում, յեթե միայն այդ գործը կատարվի հետզհետե, ամեն տարի և յեթե ծառերը դառնան գյուղի հոգատարության և խնամքի առարկա:

Քաղաքակրթված յերկրներում ամեն տարի ամայի տեղերում հարյուրավոր գեսյատին անտառներ են դցվում. ծառապատվում են բոլոր ձանապարհները, փողոցները, հրապարակներում

տնկվում են հասարակական անտառներ, զբոսավայրեր և այլն և դրա հետեւանքով մի քանի տասնյակ տարում փոխվում ե յերկրի ընդհանուր տեսքը:

## 2. ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր մերկ ու ախուր գյուղերը ծառախիտ ու ստվերախիտ անել, գցել ամեն տեղ, ուր այդ հարավոր ե, շինության և պտղատու ծառեր, բուսացնել ու տնկել բոլոր ճանապարհների, առուների, տուփակների, գետահների ու աղբյուրների շուրջ և դրանց յերկարությամբ ծառեր - հատկապես ուռենիներ, խնամել դրանց, փորպեսզի վոչ մարդը և վոչ ել անասունը չկոտրեն, չուտեն, չփոչնչացնեն դրանց, հոգ տանել, վոր այդ ծառերը ջուր ստանան ու լավ աճեն — ահա կուլտուրական - շինարարական մեր գործերից մեկը, վորը նույստելու յե Հայաստանի անտառացմանը և վորը պետք ե տեղի ունենա նրա ամեն մի անկյունում, ամեն մի գյուղում։ Ահա դրան ե, վոր պետք ե իր գործով ու հսկողությամբ մասնակցի Հայաստանի ամեն մի քաղաքացի և գյուղացի, կին թե տղամարդ, յերեխա թե հատակագոր անիտիր։

Ի՞նչպես պետք ե իրագործել այդ կտրեսը և լայնածավալ գործը։

Դրա համար մենք ոլեաք ե որինուկ վերցնենք այդ գործում մեղմից շատ փորձառու և մեղմից ավելի կուլտուրական Յեվրոպական գովրդական մովուշություն և յերկրներից։

Յերկրը անտառացնելու միջոցներ շատ են, սակայն մենք կանգ կառնենք այդ միջոցներից մեկի՝ «Ծառատունկի տոն» երի միջոցով գյուղը, շրջանը անտառացնելու յեղանակի վրա, վորը ամեն տեղ, ուր այդ գործադրված ե յեղել յերկար տարիներ, տվել և ամենափայլուն հետեւականք։

## 3. ԾԱՌԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՄՆԵՐԻ ԸՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի անտառացման գործը պետք ե վերցնի իր վրա ամենից առաջ ինքը, Հայաստանի աշխատավորությունը։ Այդ գործում նրան պետք ե ողնուն մեր ժողովրդական աշխատավորական գալրոցները, վորոնք նոր և բարձր կուլտուրայի առաջնորդներ են լինելու մեջնում։

Նույնպիսի պարագ կա գյուղի ու յերիտմիթյան և կուսկոմի անդամների վրա և մանավանդ գյուղխորհրդի, վորը անտառացման գործի այսորվա իրազործողն և լինելու։

Յեվ ահա այսպես, այդ յերեք մարմինները՝ գալրոցը իր ուսուցչով, նախորդողությունն և յերիտմիթյան քարտուղարը կազմում են ա-

մեն մի գյուղում «Գյուղական անտառացման հանձնաժողովի» կորիզը, վորը և հիմնում ե «Ծառերի բարեկամների Ընկերություն» և գորին անդամագրվում են գյուղի բալոր 10—55 տարեկան անդամները անխտիր։ Անխտիր յենք ասում, վորովհետև յեթե այդ գործին չլծվի ամբողջ գյուղը, այլ նրա միայն մի մասը, մեր տղիտության և անկուլտուրականության պայմաններում անտառացման գործը կ տապալվի, մեկի շինածը մյուսը կ քանդի, կվոչնչացնի և մենք մեր նպատակին չենք հասնի։ Ահա թե ինչու «Ծառերի բարեկամների ընկերությունը» իր մեջ ե առնում գյուղի թե տղամարդկանց և թե կանանց, հասակավորներին և պատանուն և սրանց թվին գյուղի բոլոր հոտաղներին ու հոգիվներին, վորոնց շնորհիվ (անտառնների) մեղնում վոչնչանում ե ամեն մի ծառ և տունկ։ Այդ անդամներից ամեն մեկը անդամանորեն պետք են առնվազը անկե մի տունկայն տեղերում, վորոնք նշանակված կլինին հիշածու հանձնաժողովի կողմից։

#### 4. ՇԱՌԱՏՈՒՆԿԻ ՆԱԽԱՊԱՑՐԱՍՏԱԿԱՆ ԱՅ. ԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ծառատունկի համար հանձնաժողովը նշանակում է Ծառատունկի Որ կամ Ծառատունկի Տոն.

ահա այդ տոնը ամեն մի գյուղում կատարվելու ե մեծ հանդիսավորությամբ և տյդպիսով հիմք ե զրվելու անտառացման գործին։

Բայց այդ տոնից միջանի շաբաթ առաջ կատարվելու յեն մի շաբաթ անհրաժեշտ աշխատանքներ, վորոնք կայանալու յեն հետևյալներում։

ա. Ծտու տնկելու տեղերի ճիշտ վորոշում, գրա համար անտառացման տոնի հանձնաժողովը գյուղական խորհրդի հետ միասին քննելու յեն՝ թե այս տարի իրանց գյուղի վոր հողերի, վոր առուների վրա առաջին հերթին պետք ե տնկել ծառեր. ըստ վորում առաջնություն պետք ե տալ նախ գյուղական - աշխատավորական դպրոցին — նրա բակին — յեթե ունի բակ, հողաբաժնին, յեթե ունի հողաբաժնին, հանելով նախապես ջրի առու զարոցի աշակերտների միջոցով ուսուցչի, ուսուցչունու ղեկավարությամբ։ Յիշելու յե, վոր առանց վոռողման ծառերի աճումը անհաստատ ե. ուստի, յեթե ջուր չկա վորպեսզի տնկած ծառերը առաջին տարում յերկու շաբաթ մի անգամ ջրվիճն — ավելի լավ ե այդպիսի հողաբաժնում ծառեր չտնկել։ 2. Մշտական ջոր ունեցող առուների յերկու յեղերքներին։ 3. Այն բանուկ ճանապարհների աջ ու ձախ կողմերին, վորոնք շուտ շուտ ջրվելու հնարավորություն ունեն։ 4. Գյուղական հրապարակներում։ 5.

Գյուղական լայն փողոցներում, յեթե միայն այդպիսիք կան, և 6. Հատուկ զյուղական հասարակական անտառատեղում, 2-ից մինչև 5 դեսյատին տարածության վրա, վոր պետք և հատկացնի համայնքը։ Այս անտառատեղը կարող ե լինել և գյուղական նոր գերեզմանոցը, վոր շատ ցանկալի ե։

Յեթե անկատեղին վորոշված ե, այժմ ահա, Ծառատունկի Որից 10—15-ը առաջ, չանձնաժոժողովը պետք ե գյուղական մեծ ժողով հրավիրի՝ աշխատելով, վոր ժողովին ներկա լինեն հնարյակածին չափ, նրա ամբողջ ազգաբնակությունը 10—55 տարեկան հասակում։ Այդ ժողովում չանձնաժողովի անդամները բացատրում են ծառատունկի տոնի նշանակությունը, յերկրի անտառացման բոլոր ոգուտները և հենց այստեղ նա Ծառասերների Ընկերության անդամ ե գրում բոլոր ներկա յեղողներին, ուշը դարձնելով, վոր Ընկերության մեջ գյուղի ամեն մի տուն ունենա, գոնե իր մի ներկայացուցիչը։ Ահա այս հավաքույթում չանձնաժողովը հայտարարում ե թե՝ վեր որն ե նշանակված Ծառատունկի Որ, քննում և հաստատում են ծառատունկի տեղերը և այլ մանրամաներ, ուստի առաջարկում յեն անդամութին առնից գոնե մի քանի որ առաջ կատարել ծառատունկի բոլոր նախապատրաստական աշխատանքները այն ե՝ ժողովվել առու հաելու, յեթե

կարիք կա, առուն սաքրելու՝ յեթե անմաքուր ե և, վոր կարեվորն ե, նախապես տունկերի համար փոսեր փորելու։

### 5. ՏԱԿՆԿԵՐԻ ՓՈՍԵՐԸ

Տունկը միայն այն ժամանակ կրուանի հաջող, յերբ ա. նրա արմատների<sup>թ</sup> զարգացման և հետագա սնունդի համար կան անհրաժեշտ պայմաններ, փափուկ, սննդատու և պարարտ հող, վոռոգման ջուր և տնկիի անմիջական պաշտպանություն՝ գոնե չորս-հինգ տարիների ընթացքում։ Յեվ այդ պայմանները պետք ե ստեղծել հենց սկզբում փոսեր փորելիս։

Տունկի համար հատկացված փոսը պետք ե լինի ամեն մի տունկի համար 1—1 արշին 4 վերշոր խորությամբ և մեկ ու կես արշին տրամագծով՝ լայնությամբ։ Մի տունկը մյուս տունկից պետք ե հեռու լինի յեթե՝ ուռենիներ կամ բարզի (կաղամախ) յեն, չորսից հինգ արշին, իսկ յեթե պտղատու ծառեր յեն՝ ծիրան, խոճոր, տանձ, թութ, փշատ, դեղձ և այլն մեկը մյուսից 6—10 արշին հեռու։ Նույն հեռավորությունը պետք ե պահպահել յեթե կաղնի ե, աճար, կեճի, ոփի և այլն, այսինքն մեծ կատար ու տարածվող ճյուղեր ունեցող ծառեր։ Ավելի խիտ տնկել թույլ ե տրվում միայն համեմատաբար ավելի փոքր

հասակ ունեցող ծառերի համար՝ այն ե յերբեմն դեղձի և սալորի(5—6 արշին) համար:

Ուշք պետք ե գարձնել փորպիսզի աընկիները տնկվեն ուղիղ գծի վրա յեթե յերկու կամ ավելի շարք յեն, շարքը շարքից լինի վեց արշին հեռու, փորպեսզի ծառերը կազմեն ծառուղիներ, իսկ յեթե ճանապարհի վրա յեն՝ ճանապարհի լայնությամբ, բայց առվի մյուս յերեսին փոր սալերը, կառքերը չդիպչեն, չխանգարեն, չջարդեն: Ամեն մի տնկիի տեղ նշանակելուց հետո, պետք ե փոսերը փորել բահերով, իսկ յեթե հողը խճոտ ե նաև քունքներով, Փոսերի լայնության և խորության մասին արդեն վերեվը խոսեցինք: Փոսեր փորելուա, ուշք պետք ե դարձնվի փոր փորած հողի վերին շերտը 4—5 վերշոկ խորությամբ դուրս բերվի և ածվի փոսի մի կողմ առանձին, իսկ դրա տակի հողը, մյուս կողմը՝ Յերբ այսպես տնկիների համար անհրաժեշտ բոլոր տեղերը փորված կլինին, շատ ցանկալի յե, փոր ամեն մի փոսի մեջ նրա հատակին ածվի մի փթաչափ աղպ (փեյին), թարմթե չոր—միեպնույն ե:

Այդ աղպը բույսը տնկելուց հետո նրա արմատների զարգացման համար սնունդ ե ծառայելու, և այդպես աղպած տունկը ավելի ուժեղ և մեծանում ու զորանում: Շատ ցանկալի

յե, վոր փոսերի փորելը կատարվի աշնանը, իսկ ծառեր տնկելը՝ գարնանը: Յեթե առաջին տարում այդ անել անկարելի լիդավ, դա պետք ե անել մյուս տարիներին:

#### 6. ՏՆԿԻՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Երջանի, գյուղի անտառացման գործում մեծ նշանակություն ունի տնկին, նրա տեսակը, բանի տարեկան լինելը, անկիի արմատների ինչ դրության մեջ գտնվելը և այն:

Անտառացման համար բոլոր տեսակի ծառերի տնկիներ գործածելի, յեն այսինքն, ինչպես վայրենի, նույնպես և պարաեզներից ճանած կուլտուրական ծառերինը: Ի հարկե, ամենից լավն այն ե, յերբ ամեն մի շրջան ունենա իր կենտրոնում իր սեփական տնկարանը, և այն տեղ սերմերից բուսցրած ծառերի տնկիներ—, բոլորն ել փառա հասակի և լավ խնամված գործադրվեն շրջանի անտառացման գործի վրա: Այդ գեպքում կարելի յե ըարել շրջանին ամենից համապատասխան ծառերի տնկիներ: Յեվ տուածիկա տարիներում տմհն մի շրջան այդպես ել ոլետք ե անի, յեթե ցանկանում ե անտառացման գործը դնել հաստատ հիմքերի վրա:


Սակայն, մինչե սեփական տնկարաններ ունենալը, կարելի յե «յոլա գնալ» և ուրիշ տեղերից բերված տնկիներով:

Ա,ս դեպքում ցակալի յե, վոր ավելի ցուրտ տեղերի տնկիները տարվեն ավելի շոր տեղեր և ընդհակառակը: Տաք տեղերից ցուրտ տեղեր տարված տնկիները չեն դիմանում նոր տեղի կլիմայական պայմաններին, լավ չեն աճում և շուտ չորանում են, այն ինչ ցուրտ և հողային վատ պայմաններում մեծացած տնկին, յերբ տնկում յենք ավելի տաք և հողային լավ պայմաններ ունեցող տեղերում դրանք այստեղ աճում և զարգացնում յեն լավ:

Բացի դա, պետք և ուշք զարձնել վոր տնկիների արմատները լինեն չփերավորված, շատ մազմզուկներով և յերեք տարեկանից ավել շինն: Մի և յերկու տարեկան տնկիները ամենից լավ յեն բռնում, այն ինչ յերեք տարեկանից բարձր տնկիները դժվարությամբ յեն բռնում:

Յեթե չկան հատուկ տնկարաններ, տնկիներ կարելի յե ստանալ ծառերի մացառուտներից, վորոնք մեծ քանակությամբ բնում յեն մայր ծառի տակին և խանդարում յեն նրա զարգացմանը: Այդիներում պարտիզանը ամեն աշուն, կամ գորնանը վաղ աշդակիսի մացառուտները կտրում, հեռացնում և ու դեն դցում: Անա այդ մացառուտները, յեթե նրանք խնամքով փորված և իրանց արմատներով անվատա— հանված են, կարող են ծառայել վորպես տնկիներ: Այդ-

պիսի մացառուտները տալիս յեն դրեթե բոլոր տեսակ ծառերը՝ սալորը, փշատը, տանձը, բալը, կեռասը, թութը, ծիրանը, վորպես և կաղնին, կեճին, սիզը, բարդին, կաղամախը և այլն: Դրանցից ընարելու յե ուղիղ գնացած, լավ ճյուղավորված և չինասված կամ քիչ վնասված արմատավորները և, նախ քան տնկելը, պետք ե զրաց ժողովել ըստ տեսակների ու, փոքրիկ իւրաքանչ կապելով, արժատները ծածկել հողի տակ և վրան տալ խոնավ հող, թողնելով բունը և ծայրերը հողից գուրս կիսապառկած:\*) Տնկելուց մի կամ յերկու, առառավել յերեք որ առաջ պետք ե այդ տնկիները ունենալ դյուզում և պահել մի շվաք տեղ, վրան դարձլալ խոնավ հող ածելով:



Նկար № 1. Ծառերի պահելը հողի տակ:

\*) Տես պատկերը:

Մի խոսքով, Ծառատունկի Հանձնածողովը,  
իր գործակիցներով աշխատելու և փոր ծառա-  
տունկի տոնից գոնե յերեք որ առաջ գյուղին ան-  
հրաժեշտ անկիների ամբողջ քանակը լինի գյու-  
ղում պատրաստ եր տրամադրության տակ:

Ծառատունկի Տոնի նախորեկին Հանձնածողովը  
իր աշխատակիցներով պետք ե հողի տակից  
հանի ստացած կամ ձեռք բերած տնկիները և ուշա-  
զրությամբ քննի դրանցից ամեն մեկը և ընտրի  
ամենից լավ արմատներով և, վոր զլիսպորն ե, լավ  
ընով անկիները և ընտրածը տաստաս խուրձե-  
րով կապել տա և պատրաստի հաջորդ որվա տո-  
նի համար: Յեթե անկիների արմատները շատ  
յերկար յեն, մի քանիսը կոտրատված կամ ջար-  
տված, այդ արմատիները պետք ե տյգու հա-  
տուկ մկրատով (սեկատոր) կամ ետոցի սուր  
դամսակով կտրել, գեն գցել: Մնալով անկինի վրա  
ջարդված, վիրավորված այդ արմատը հողի տակ  
կփթի և կփթեցնի նաև նրա վերեկի առողջ մա-  
սր: Այս նախազգուշացումը անհրաժեշտ ե հիշել  
անկիների ընտրության աշխատանքի ժամանակ:  
Տնկելու պետք ե զնան ամենից լավ, առողջ և  
զգարթ տեսակները:

## 7. ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՏՈՆԵ:

Տոնի նախորեկին Հանձնածողովի անդամնե-  
րը պետք ե մանրամասն ցուցակագրեն գյուղի բան

ունեցողներին և հաղորդեն նրանց, վոր հաջորդ  
որը՝ Ծառատունկի Տոնին նրանք ներկայանալու  
յեն իրանց բահերով: Բացի դա, հոգ պետք ե  
տանել, վորպեսզի ամեն մեկը, ով տնկի ունի  
տնկելու, բերի իր հետ  $2\frac{1}{2}$ -3 արշին յերկարու-  
թյամբ և բահակոթի հաստությամբ մաքրած, ա-  
ռանց խութերի բներ-կոլ-եր, վորոնք պետք ե  
ծառայեն տնկիի համար վորպես պահապաննե-  
ցուկներ: Բինը անհրաժեշտ պայման ե ամեն մի  
տունկի, յեթե ուզում ենք վոր տնկիի զարգա-  
ցումը զնա հաջող:

Ուրեմն, բներ բերելը պարտավորեցուցիչ ե  
լինելու ամեն մի տնկիի համար: Վորպեսզի տն-  
կողը բարոյապես կապված լինի իր ձեռքով արն-  
կած տնկիի աճման հետ, բնի մի ծայրը պետք ե  
փոքր ինչ տաշել և նրա վրա զրել տնկողի ա-  
նուն-ազգանունը: Սա ևս կարեոր ե հոդեբանա-  
կան տեստկետից: Գրելով իր ձեռքով տնկած  
տնկիի մոտ իր անունը, նա-տնկողը հոգ ե տա-  
նում, վոր այդ տնկին բանի, զարգանա, դա նրա  
աշխատանքի պարծանքն ե:

Յեկ դա պետք ե իրադորձել ամեն տեղ:  
Բների հետ միասին պետք ե տնկողը ունե-  
նա իր հետ նաև կանեփի, բրդի կամ մի  
այլ նյութից յերկու արշինանց թել-սովորա-  
կան շպագատի հաստությամբ՝ տունկը բնիրի  
հետ կապելու և ամրացնելու համար:

Այդ նպատակին կարող են ծառայել նաև դալար ճլուռի ճյուղերը՝ յեթե կան այդպիսիներ։ Բացի դա մյուս կարեւոր պայմանը դա տնկիներին զուր տալու խնդիրն է։ Մենք արդեն ասեցինք, վոր առանց ջրի, առանց առատ վոռոգման տնկի տնկելը ավելորդ և զուր աշխատանք է, ուստի Հանձնաժողովը տնկելուց մի քանի որ առաջ պետք է հոգ տանի, վոր տնկիների մոտ գտնված առուները պատրաստ լինեն, վոր ծառատունկի որը ձեռքի տակ ջուր լինի՝ տնկած տնկենին իսկույն ջրելու համար։ Այս գործով պետք է զբաղվի Հանձնամողովի կողմից ընտրված Զրային սեկցիան, բաղկացած գյուղի կամ «Ընկերության» ամենից յեռանդուն անդամներից, վորոնք ամբողջ ժամանակ հսկելու յեն տնկիների իր ժամանակին ջրելու գործի վրա։

Ընդհանրապես Հանձնաժողովը աշխատելու յե վորպիսպի ծառատունկի գործով հետաքրքրվեն և նրա աշխատանքների հետ կապվեն գյուղից վորքան կարելի ե շատ մարդիկ և, վոր այդ գործը չդառնա գյուղի մի քանի մարդկանց համար ձեական խողալիք կամ դատարկ ժամանց։ Ուսուցիչներ, յերիսաւարդներ, պատանիներ, աշխարհաներ, մանավանդ գյուղի հոտաղներն ու հովիվները բոլորը պետք ե գործի

կանչվեն. վորքան շատ մարդ, վորքան շատ հետաքրքրվողներ մոտենան այս գործին, այնքան ապահով կգա անտառացման գործը. Թող վոչ վոք չհամարի իրեն ոտար ու կողմակի, թող հնար յեղածին չափ ընկերության մեծ թվով անդամներ առնեն իրանց ձեռքը անտառացման գործը, վորի աջողությունը, ինչպես արգեն ասեցինք կախված է համայն հասարակության համակրությունից և վոչ թե նրան մի քանի ընտրյալներից կամ նշանակվածներից։

### 8. ՄԱՌԱՏՈՒԿԻ ՏՈՒԾ ՑԵՎ ՏՆԿԻՆԵՐ ՏՆԿԵԼԸ

Ծառատունկի տոնը արտաքուստ յեվս կատարվելու յե մեծ խանդակառությամբ։ Առավոտը շուտ զանգահարությամբ, դոու ու զուռնայով գյուղիսրհուրդը, դպրոցի բոլոր սաների և յերիտմիության առաջնորդությամբ և մասնակցությամբ գրոշակներով, ծառատունկի տոնին հարմար նախապես շինած պլակատներով և լոգունգներով, գյուղական ամբողջ հասարակությունը դուրս ե գալու հրապարակ, ուր Հանձնաժողովի անդամները կազմում են հասարակական միտինգ, վորի ժամանակ նրանը բացատրելու յեն ծառատունկի որվա նշանակությունը և տոնելու յեղանակն ու կարգը։ Այդ շքերթը պատելու յե բոլոր թա-

Դերը և ժողովելու յե ամեն մի տնից Ընկերության անդամներին իրանց բահերով, բհերով։ Այդտեղից դյուզի ամբողջ համայնքը նորից ժողովում և կենարոնական հրապարակ, ուր գրոշակաղարդ սայլերի վրա բարձված պետք և լինեն խուրձերով կապված տնկիները, այնուհետեւ, ըստ հարմարության, գյուղը կենարոնանալու յե մի տեղ՝ ծառատնկման մի տեղի վրա, կամ բաժանվելու յե զանազան կողմեր՝ յեթե ծառատնկման տեղերը ցըլված են։ Վերջին գեղքում յուրաքանչյուր խմբակ ունենալու յե իր առաջնորդը, պատսխանատու ղեկավարը, տնկի ներ ջրող մասնաժողովի անդամին, վորոնք տանելու յեն իրանց հետ ծառափոսերի թվին համապատասխան ծառատունկեր։ Տեղ հասնելով, ամեն մի տնդամի, ըստ իր հետ բերած բհերի թվի, բաժանվում են տնկիներ։ Տնկողները շարքով կանդնում են փոսերի առաջ զույգերով և սկսվում ե տնկելու գործողությունը այսպես։ Նախ փոսի մեջ ածում ու ցըլվում ե հողի այն վերին շերտը, վոր առանձին եր կիտված։ Պրանից հետո, պետք ե ցցել բհերը փոսի կենարունում, հետո ածել փոսի մյուս կողմում գտնված ներքնաշերտի հողից այնքան, վոր փոսի կենարունում գոյանա մի կոնուսաձև թումբ, վորի գաղաթը համար փոսի բարձրության։ Կոնուսի


գաղաթին (Տես պատկեր №2) դրվում ե տնկին բնիրին կից, ուղղահայաց, վոր բոնում ե անկողներից մեկը և տնկերի արմատները ուղղում ե այնպես, վոր նրանք փովին կոնուսի բոլոր կողմերը, չխճճվեն իրարու հետ։ Մյուս անձը, վոր



Նկար № 2. Տունկը տնկելու և բիրը ամբացնելու յեղանակ։

ունի ձեռքին բահը, դդուշությամբ թափում ե  
տնկիի արմատների վրա հողի մնացորդը: Ուշը  
պետք ե դարձնել, վոր հողը գունդ-գունդ չկնի,  
այլ վուխը, ցրած, մանրացած: Անա այդ հողը  
ածվում ե արմատների վրա և վոտքով տրոր-  
վում ե վորպեսզի արմատների արանքում բաց  
տեղիր չմնան. միաժամանակ ծառ բռնողը աշ-  
խատում ե վոր տնկին խորը չնստի, այլ բարձր  
լինի հողի մակերեւվույթից և հողը ամեն կողմից  
ամուր շրջապատի արմատները: Պետք ե տնկել  
այնպես, վոր տնկին մի-յերկու մատ ավելի խոր  
լինի անկած, քան նա յեղել ե բերած տեղից,  
վոր կարելի յե հեշտ նկատել տնկու վղից: Յեկ  
այսպես հողը հետզհետե ածվում ե տնկիի վրա,  
նրանով լցում ե ամբողջ փոսը և, յերբ փոսը  
լցված ե, անշուշտ կտվելան ավելորդ հող.  
այդ հողից պետք ե կազմվի փոսի լայնությամբ  
նրա ամբողջ շրջագծով մի շրջան իր թմբերով:  
Դա նրա համար ե, վոր առվից այնտեղ ջուր  
թողնի կամ ձեռքով - դույլերով, կժերով ջուր  
ածվի անկերի տոկը: Զուր ածվելու յե այնքան,  
վոր հողը ամբողջովին ծծի և ջուրը դուրս դո  
յերես: Դա նշանակում ե վոր հողը հաղեցվածե  
ջրով: Անա այժմ բները պետք ե կապել տնկիի բնի  
հետ (տեսնէ. №3) այն թոկով, վոր վերցրել են իրանց  
հետ տնկի տնկողները: Կապել պետք ե յերկու

տեղ, բայց վոչ շատ ամուր, հողից յերկու թիզ  
բարձր և տնկիի ծայրից յերկու թիզ ցած—ըստ  
հարմարության և ըստ տնկիի բնի յերկարության:  
Այս կապերը նրա համար են, վոր մատաղ և  
թույլ տնկին չշարժվի քամուց կամ մարդու  
կողմից, վոր նրա արմատները մնան ամուր և  
մազմզուկները չպոկվեն իրանց տեղերից: Սա՝



Նկար № 3: Տնկին բըի հետ կապելու յեղանակ:

բնիրը տունկի սկզբնական պաշտպանության առաջին և գլխավոր նեցուկն եւ:

Գալով բարդիի և ուռենիների անկիներին, դրանք կարող են լինել և մի տարվա շվեր 1<sup>1/2</sup> շ արշին յերկարությամբ: Դրանք շատ լավ են, մանավանդ ուռենիների շվերը առուների, առավակների, գետակների ափերին տնկելու, ուր հոսում և մշտական ջուր և վոռոգում են նրանց արմատները: Ուռենիներն ու բարդին շատ լավ աճում են այդպիսի տեղերում և արդեն մի յերեք չորս տարում այնքան են զարգանում, վոր ստվերավորում են առուն: Յերբ տնկելու յենք ուռենիներ կամ բարդի, կարիք չկա վոր նրանց համար փորվեն մեծ փոսեր, այլ բավական և բացել մի առու 8—10 վերշոկ խորությամբ և նույնքան լայնությամբ ու տնկիները տնկել միմիանցից 3—4 արշին հեռու, թաղելով ուռենու կամ բարդու տնկին 8—10 վերշոկ հողի մեջ ու ծածկել այն առվի հողով: Հողից դուրս մասցած 1<sup>1/2</sup>—2 արշին տնկիների աչքերից հենց նույն տարում դուրս կգան մատաղ ճյուղեր, վորոնց առօրին աչքերը պետք ե պոկել և թողնել վերին մասի վրա 5—6 ճյուղեր:

Յերբ տնկելու և ջրելու աշխատանքները ավարտվեցին, բոլորը իրենց բահերով դալիս ժողովում են գյուղի հրապարակ, հանձնաժողովն

անդամների հսարագիտությանն և մոռւմ որվա մնացյալ մասի խելացի ու հետաքրքիր կազմակերպումը, Պարեր, յերգ, ձառախոսություն, դրույցներ, նույնիսկ գոտեմարտ, վագր, և այն սրանք բոլորը ցանկալի են և մտցնում են մեծ աշխուժություն ու հետաքրքրություն տոնակատարության բնույթի մեջ:

### ՏՆԿԻՆԵՐԻ ԽՆԱՄՖԸ

Սակայն հարցը տնկիներ տնկելու մեջ չե, այլ տնկիները խնամելու, նրանց պահպանելու մեջ: Ահա այդ տեղ և վոր թե չանձնաժողովը, և թե նրա հետ ամբողջ գյուղը պետք ե լարեն իրենց ջանքերը, ուշադրությունը ու հոգատարությունը: Մեր գյուղը չի սիրում ծառ, նա, կարծես, ծառի բնական թշնամին ե. կոտրել, ջարդել ծառ, տունկ, թուփ, ուտեցնել տալ անասուններին, այնպես, վոր ծառի հետքն անգամ չմնա, դա մեր գյուղի բնորոշ զիծն ե, վորի զեմ պետք ե կովել ամեն միջոցներով:

Յեթե գլուղը վորոշել ե անտառացնել իր առուն, բագը, հանդը, անտառատեղին և այն, այդ գեղքում հարկավոր ե վոր գյուղը ունենա հասարակական տնկիների վրա հսկող—հատուկ մի տնկապահ, վորը պատախանատու

լինի սնկիների պահստանման համար, ջրի նրանց՝ յերբ հարկավոր ե, բները ուղղի, կապի, անկիների «զլուխները տա» և ընդհանրապես հսկի անկիների վրա: Յեկ դա պետք ե լինի վոչ ձրի, այլ վորոշ վարձատրությամբ: Բացի դա, պետք ե կրթել հասարակության գիտակցությունը անկիներ խնամելու խնդի շուրջ: Ամեն մի հոտաղ, հովիվ, անդամ գրվելով ընկերությանը, հսկում ե վոր անառուները չուտեն, չվոչնչացնեն նորատի ծառերը, իսկ ամենից յեռանդուն և գիտակից պաշտպաններ պետք ե լինեն դպրոցի սաները՝ գյուղի ապագա գիտակից այդ անդամները: Դպրոցը իր ուսուցիչներով պետք ե պարբերապես կրթի, պատվաստի իր սաներին ծառերի խնամքը, նրանց նշանակությունը, եվ, յեթե կարելի յե, սովորեցնի նրանց պատվաստել տունկեր, ծառեր, վորպեսզի այդ աշխատանքները դպրոցի պարտեզից և այդուց սաները տանեն իրենց տուն, իրանց բագ, իրենց պարտեզ, վորով միայն գյուղը աւրողջովին կծառափորձի և կստանա այն ոգուտները, վորոնց մասին խոսեցինք սկզբում:

Գյուղական գպրոցի պարտեզն ու հողաբաժինը առաջինը պետք ե դառնան գյուղի ծառափորման որինակներ. այստեղ պետք ե դա ու մտնի գյուղացին տեսնելու և սովորելու թե՝

ինչպես պետք ե խնամել ու զարգացնել ծառն ու պարտեզը. ուստի գյուղական ուսուցիչների վրա հատուկ պարտականություն կա այդ գործը դնել վորչափ կարելը և լայն և խիստ: Գյուղական խորհուրդը իր հասարակական վճռով գյուղի ծառուցման, նրա անտառացման պատասխանատու մարմինն ե, ուստի խորհրդի խստությունն ու պահանջկոտությունը անկիների վասողների վերաբերմամբ պետք ե հայտնի լինի գյուղական հասարակության բոլոր անդամներին:

Ահա ծառատունկի այս «որեր»-ի և նրա տարեց տարի կատարված այդ ուղղությամբ աշխատանքից ե. կախված գյուղի ու նրա շըրջակայքի անտառացումը: Հիշելու յի, վոր ընդամենը մի տասնյակ տարի իրաք յետելից կատարվող անտառացումով կարելի յե 10—12 հազար ծառ անկել գյուղում՝ հասարակական ոգտագործման համար. այստեղից անտառացումը հետզինետե կանցնի մասնավոր տներ, անտեսություններ, և կզարդանան մեր գյուղերում պարտեզներ, այդիներ և այդպիսով մեր ավերակ, չոր ու մերկ գյուղը մի տասնյակ տարուց հետո կստանա այն պատկերը, վորին կարու և թե յերկիրը և թե ինքը ազգաբնակությունը: Մեր գյուղը, վերջապես, կսովորի ծառ սիրել:

Այդ որվանից հայտառանի անտառացումը ապահովված կլինի ընդ միշտ:



ՀԱՅՈՒԹ  
ՏՈ ԲՈՒՎԲԻ ՔՓԼԻ.



203.97

